ՏԵՂԵԿԱՆՔ

2021թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառքներով օտարված հողամասերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ մարզպետարանների ներկայացված տեղեկատվության՝ 2021թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճուրդ վաճառքներով օտարվել է **1955 հա** հողեր՝ **4,734,434,255** հազ. դրամով:

Օտարումները համեմատաբար ակտիվ են եղել ՀՀ Արմավիրի **/491 հա/,** ՀՀ Արարատի **/376 հա/,** ՀՀ Արագածոտնի **/311 հա/,** ՀՀ Կոտայքի **/263 հա/ և** ՀՀ Գեղարքունիքի /**128 հա**/ մարզերում, առավել պասիվ՝ ՀՀ Տավուշի /48 **հա**/, ՀՀ Շիրակի **/60 հա/** և ՀՀ Սյունիքի /**60 հա/** մարզերում:

	ՀՀ մարզ	Աճուրդների քանակը	Տարածքը /հա/	Գումարը /հազ. դրամ/
1.	Արագածոտն	500	311.25	276,833,233
2.	Արարատ	734	376.56	691,415,294
3.	Արմավիր	419	491.56	402,767,924.6
4.	Գեղարքունիք	206	128.77	150,166,040.3
5.	Լոռի	370	106.19	351,348,806.9
6.	Կոտայք	390	263.10	2,378,638,523.8
7.	Շիրակ	135	60.32	202,424,203
8.	Սյունիք	105	60.88	83,017,867.31
9.	Վայոց ձոր	200	107.51	101,282,876.9
10.	Տավուշ	203	48.89	96,539,485
	Ընդամենը	3262	1,955.02	4,734,434,255

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Ըստ իրականացված աճուրդների քանակի՝ ընդամենը ՀՀ - ում կազմում է **3262** միավոր (**1955 հա**), որից **1552** միավոր (**1807.08** հա) գյուղատնտեսական նշանակության, **1538** միավոր (**84.84** հա) բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության **156** միավոր (**50.36** հա), հատուկ պահպանվող **4** միավոր (**0.58** հա), ջրային **4** միավոր (**0.69** հա) և **8** միավոր (**11,46** հա) էներգետիկայի հողերի աճուրդ:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	100 տոկոս կադաստրային արժեքի վաճառքի դեպքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	Տարբերությունը
1.	Արագածոտն	276,833,233	228,109,240	48,723,993
2.	Արարատ	691,415,294	611,490,912	79,924,382
3.	Արմավիր	402,767,924.6	299,766,098	103,001,826
4.	Գեղարքունիք	150,166,040.3	136,375,988.00	13,790,052
5.	Լոռի	351,348,806.9	304,864,601	46,484,205
6.	Կոտայք	2,378,638,523.8	590,205,592	1,788,432,931
7.	Շիրակ	202,424,203	153,409,085	49,015,118
8.	Սյունիք	83,017,867.31	54,841,533	28,176,334
9.	Վայոց ձոր	101,282,876.9	56,785,759	44,497,118
10.	Տավուշ	96,539,485	102,457,497	-5,918,012
	Ընդամենը	**4,734,434,255**	**2,538,306,308**	**2,196,127,947**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ օտարված հողամասերի դիմաց գանձված գումարների հարաբերությունը դրանց կադաստրային արժեքի համեմատ ՀՀ մարզերում տարբեր են՝ այսպես օրինակ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են ՀՀ Կոտայքի մարզում՝ **1,788,432,931** հազ. դրամի օգուտ, ՀՀ Արմավիրի մարզում՝ **103,001,826** հազ. դրամի օգուտ և ՀՀ Արարատի մարզում՝ **79,924,382** հազ. դրամի օգուտ, իսկ ամենացածր ցուցանիշը ՀՀ Տավուշի մարզում է **-5,918,012** հազ. դրամի կորուստ:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի մակերեսը (հա) 2020/2021		Տարբերությունը	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (դրամ) 2020/2021		Տարբերությունը
1.	Արագածոտն	484	311	- 173	358,495,182	276,833,233	-81,661,949
2.	Արարատ	470	377	- 93	789,131,288	691,415,294	-97,715,994
3.	Արմավիր	78	492	414	83,985,876	402,767,924	318,782,048
4.	Գեղարքունիք	287	129	-158	552,826,349	150,166,040	-402,660,309
5.	Լոռի	78	106	28	229,610,170	351.348.806	121,738,636
6.	Կոտայք	362	263	-99	980,846,895	2,378,638,523	1,397,791,628
7.	Շիրակ	22	60	38	128,173,964	202,424,203	74,250,239
8.	Սյունիք	64	61	-3	95,954,339	83,017,867	-12,936,472
9.	Վայոց Ձոր	80	108	28	86,508,715	101,282,876	14,774,161
10.	Տավուշ	56	49	- 7	204,510,990	96,539,485	-107,971,505
	Ընդամենը	**1981**	**1955**	**-26**	**3,510,043,767**	**4,734,434,255**	**1,224,390,488**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ 2020 թվականի համեմատ /**1981** հա/ 2021 թվականին /**1955** հա/ օտարվել է **26 հա** պակաս հողատարածքներ, բայց արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել **1,224,390,488** ՀՀ դրամ ավելի:

Ներկայումս հողերի աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Առաջարկում ենք աճուրդների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել նաև համայնքների, ինչպես նաև մարզպետարանների էլեկտրոնային կայքերում և հետամուտ լինել դրանց պատշաճ կատարմանը: